

ՎԵՍՏԵԱՆ ԿՈՑՍ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ո Յ Ա Ռ Ա Ջ Ի Ն Դ Ա Ր Ո Ւ

(Շար. տես էջ 370)

ԳԼՈՒԽ ԺԴ

Ի Ա Ր Ո Ց Կ Ն



ՄԵԿԵՏՈՍԻ գուշակութիւնն ահա բեկնած էր գ'րոմեախանուս Որչափ որ կը ջանար ինքզինքը համոզել, թէ նա՝ որ իրեն մեռնելու կերպը չէր կրցած գիտնալ՝ չէր կարող ևս աւելի ուրիշին մահը գուշակել, սակայն պեճ ապահով չէր։ Կուսնելիայի դէմքն միշտ իւր մտաց առջև գալով՝ զինքը կը տանջէր. շատ անգամ մեհնանը կ'երթար ի պատիւ աստուածուհոյն նուէրներ ընելու, այլ վեստեան կուսին համեստութիւնն իրեն ակնածել կուտար։

Անիկետոսի մահապարտութեան օրը Դոմեախանոս կանուխ ելաւ, և ճանձ թրսալէն ձանձրացած, որ իւր սովորական զբաղանքն էր, անկողնոյն վրայ տարածուեցաւ և զինքը սարսափեցնող մարգարէական խօսքերուն վերայ սկսաւ մտածել, տակաւ տակաւ երկիւղն կը սառտկանար, ուստի օրոշեց ամենայն ինչ ընել սխիտիւր համար. յփքազգարար ամէն տեսակ գուարճութիւնները չարաչար գործածած էր, և երկար ժամանակ մտածեց որ զոնէ այնպիսի գուարճութիւն մը գտնէ՝ որ նորութիւն մ'ունենայ. հուսկ ապա ուրախութեամբ ծափահարեց և կանչեց Պարթենոսը,

և երկայն ատեն մեզմ' ձայնով նորա հետ խօսեցաւ։ Տուած հրամաններն այնքան տարօրինակ էին, որ ազատագրեալն անգամ՝ խնդրեցած կարծելով զնա՝ ապշած կը դիտէր. սակայն տրուած հրամանները կատարելու համար դուրս ելաւ։

Քիչ վերջը պալատին սրահներուն և մասնաւորապէս ճաշարանին մէջ կը լսուէր անընկճատ շարժում մը, և կը տեսնուէին ծառայներ, որոնք տարօրինակ առարկաներ՝ նոճիկ և տօտախի ճիւղեր ձեռքերին բռնած կ'երթային կու գային, և սեւ ներկ մը կը պատրաստէին սեղանատան անկողինները գունաւորելու համար։

Դոմեախանոսապրքորուելով և ուզելով այս պատրաստութեանց պատճառը իմանալ, զնաց ամուսնոյն քով՝ որ սովորականէն աւելի ցուրտ կերպով զինքը ընդունեցաւ, և որ դաժան դէմքով մը ըսաւ, թէ գուարճանալ կ'ուզէր բոլոր իրեն բարեկամ պատրիկները մեծաշուք ճաշի մը հրաւիրելով։ Յիրաւի, նոյն առաւօտը կանուխ, բազմաթիւ պատրիկներ և ասպետաց կարգէն շատ մը երիտասարդներ հրաւիրուեցան կայսեր պալատը ճաշելու։

Երեկոյեան, արևուն մոտեցէին առաջ, Ոսկեզօծ տան առջևը հասան։ Ըստ սովորութեան հետերնին բերած էին իրենց ծառայները, որոնք զաւթին մէջ կը կենային, երբոր իրենք միայն ճաշարանի կից սենեակը կ'երթային՝ կոշիկնին հանելու և ճաշին յատուկ շրջազգեստը հագնելու համար։ Կայսեր գերիներն իրենց կը սպասէին, և փոխանակ ծաղկէ պսակ մը տալու՝ նոճիէ պսակ մը կու տային։ Երեկոյեան անգամներն և ասպետներն, այս հրաւիրէն և սենեկին խորհրդաւոր կարգադրութենէն անարժեք, ուրասան միմեանց երեսը նայի։ Չէին համարձակեր խօսիլ, այլ զարհուրած նայուածքով իրարու կը նայէին, երբ ճաշարանի դուռն Դոմեստիանոսի առջև բացուեցաւ։

Սէ պատմուճան մը հազած էր, զլուր նոճիով պսակած և իւր սովորականէն ասելի խիստ դէմքն՝ գերեզմանէն ելած մետելի մը կերպարանքը կու տային իրեն։ Նշան մ'ըբաւհրաւիրեալք հացկերոյթի սենեակը մտան, յորում իրենց երկուդն աւելի սաստկացաւ։

Ամբողջ սէ ներկուած՝ պատերն նոճիի և աստախի դրոսանգներով զարդարուած էին. պղնձէ կանթեղ մը ազօտ կերպով կը լուսաւորէր սեւով ծածկուած սեղանը, որուն շորս կողմը կային պարսպ անկողիներ՝ նոյնպէս սեւապատք։ Իւրաքանչիւր բազմականին ետև դրուած էր յուղարկաւորութեան հանդիսի սին մը, որուն վրայ կային գերեզմանական կանթեղ մը և զլիւն մինչև ոտքը սև հագուած և ձեռքը ջրէ ժամացոյց մը և մարած կանթեղ մը բռնած պատանի մը, որ մահուան ոգին կը ներկայացնէր։

Եղկելի հրաւիրեալք կարծելով, թէ Դոմեստիանոս՝ զիրենք մահուան դատապարտելէն առաջ՝ ուզած էր յուղարկաւորական սեղանի մը հրաւիրել, չէին համարձակեր փոքր շարժում մ'անգամ ընել։ Սինկրիտոսը և ասպետը, մտեցէք և մասնակցեցէք այս խնձորից՝ որ ի պատիւ Դակիոյ մէջ մեռած զիւցազանց ոգիներուն համար է։ Ըստ Դոմեստիանոսի։

Պատրիկներն առանց ուղարկելու լայն բանին վրայ՝ հնազանդեցան։ Նոյն պահու պատանիք պար մը խաղացին, որ տխուր և

անարկու երեկոյթ մ'ունէր։ Յետոյ բազմականաց յուղարկաւորութեան հանդիսից մէջ սովորական եղած միւր բաժնեցին։ Պատրիկներն հազիւ թէ զպան անոր խորին լուսթիւն մը օրահին մէջ տիրած էր. միայն Դոմեստիանոս կը խօսէր, որ այլևայլ տխուր և անաւոր պատմութիւններով անոնց երկուզը կը սաստկացնէր և կը զաւարճանար։

Սեղանն երկու ժամ տևեց, յետոյ Դոմեստիանոս՝ որ արդէն սկսած էր ձանձրանալ՝ հիւրերը ճամբայ դնելէն յետոյ սեղանին դիմաց նստաւ առանձին։

Պատրիկները տուն գառնալով շատ զարմացան, երբ իմացան թէ կայսեր կողմանէ զրկուած գերի մը՝ իրենց նուէր բերել էր սեղանին վրայ գործածուած արծաթեայ սպասանքը, նոյնպէս գերեզմանաց ոգիները ներկայացնող պատանիքը։ Այս առաջին անգամն էր որ Դոմեստիանոս կենացը մէջ՝ օրոնց որ չարիք հասուցած էր՝ կը վարձատրէր։

Մինչդեռ բազմականք նորա առաւանձեւ նոթիւնը կը զովէին, կայսրն դեռ ճաշարանին մէջ երկնցած՝ պատրիկներուն վախը յիշելով, և մտածելով թէ հետեւալ օրը բաղաբացի կայսեր առաւանձեւութիւնը յերկինս պիտի բարձրացնէին՝ կը զաւարճանար։ Յետ երկար ծիծաղելու և շատ անգամ բաժակը դատարկելու, ըստ Պարթենոսին, որ միշտ պտտաւ էր հրամանները կատարելու։

— Հարկաւ բազմականք իմ սուսած հացկերոյթս շուտով պիտի չի մոռանան։ Գիտեն որքան կը դուարանային՝ զիրենք դուստու և անարեկելալ տեսնելով, բաւական ժամանակ կար որ այլապի գուարնացած չէի։ Միայն կը ցաւիմ թէ ինչո՞ւ Դոմեստիան ևս չի կանչեցի։ Թէպէտև ինքն ալ զուարճացաւ, սակայն երկար պիտի չի տեսէ այն, որովհետև կ'ուզեմ իւր ձեռքէն ազատիլ։

Պարթենոս ուշադրութեամբ այս խօսքերը մտիկ կ'ընէր, որպէս զի հաւատարմութեամբ կայարուհոյն ծանուցանէ։

Դոմեստիանոս իւր անկողնոյն վրայ տաւ բաժուած ըստ սովորութեան կը յորանջէր, երբ յանկարծ որոտաց և կայծակի հարուած մը ըստեցաւ։

— Ի՛նչ մարկայից գիշեր է, ըսաւ՝ սեւ նեկին տխուր կարգադրութիւնը տեսնելով։
Եւ իսկոյն խաղաղութի գաղափարսեալ ծեւրունի քրիստոնէին զէմէն աչացը առջև ներկայացաւ։ Կարծես կը տեսնէր նորա ճաղատ գլուխը սպիտակ մօրուքը և նորա քաղցր ու հանգարտ նայուածքը, որ յանգիմանական կերպով մ'իրեն դարձեր էր։ Իւր չորս կողմը զանուած բոլոր առարկաներն իրեն երևաւ կայութիւնը կը տաքցունէին, և կը կարծէր լսել ձայն մը, որ ականջէն կ'ըսէր. « Եւ ները պիտի լսիեն ոսկրներս »։ Պաղքտիւնը մ'իշաւ ճակատին վրայ և բոլոր մարմնովը աարուցեց։ Եետոյ Պարթենոսի մօտեանալով՝ նորա բազկին վրայ կ'ընկնեցաւ, և ճաղարանէն դուրս ելնելով՝ աչքերը զոց սենեակը գնաց՝ չի տեսնելու համար Անիկեւ տոսի տառերը, որ կարծես կը հալածէր զինքը։

— Ժամանակն ուշ է, ըսաւ նա այլայլած ձայնով, ես կ'ուզեմ անկողին երթալ։ Օրական աշխատութիւններէն յոգնութիւն առած ժամանակս գնաւ Արիստան դաշար, և նայէ՛ թէ արդեօք Նազովրեցւոյն մեխիբքն անձրևէն ցրուած են։

Այս հրամանն շատ հաճոյ չի թուեցաւ Պարթենոսի, որ՝ փոխանակ այն երեկոյնեան արշաւանքին՝ կը փափաքէր հանգիստ քուռ ըլլալ, ասկայն պատասխանեց.

— Եր հնազանդիմ ձեր հրամանին, կայսր, բայց այս ժամուս խաղցկն մարած է և քաց աստի՛ գիշերն մութ է և ինձ անկարելի պիտի ըլլայ այն շան սյրուած տեղը գտնել։

— Վնաս չունի, ես այսպէս կ'ուզեմ։ և թէ՛ կը վախե՛ս՝ ա՛ռ հետդ ջահեր, գեւրինք և կամ պրեստորներ։

— Այ՛նթամ կատարելու ձեր հրամանը, կայսր, պատասխանեց Պարթենոս։

Եւ առանց իւր գովամակութիւնը ցուցընելու հեռացաւ այն հրամանը կատարելու համար։ Անձրևն զաղբած էր, օակայն հեռուն կ'որոտար զեռ և մերթ ընդ մերթ փայլակն ամպերը կը պատառէր, երբոր Պարթենոս երկու պահապաններով Պալատինեան բլրէն հեռացաւ։ Ազատագրեալն թէպէտ և Դոմետիանոսի մտերիմն էր, սակայն զինքը

կ'արէր։ Որովհետև իւր տիրոջ տէրն կամ մտերմութիւնն զինքը կը ստիպէր թէ խռնարհելու և թէ նեղութիւն կրելու, որով որ օրուան վրայ նորա չար սրտին մէջ վրէժ խնկրութեան փափաքն սաստիկ կը վառէր։ Արագօրէն դէպ ի Արիստան դաշար կ'երթար, և պրեստորաց ջահերու լոյսն կ'անդրադառնար իրեն զէմէն վրայ, յորում կը տեսնուէր մեղութեանց պատկերն։ Գիշերային մթնութեան պատճառաւ միայն ջահերու լուսաւորած փոքրիկ տարածութիւնը կարենալով տեսնել, ազատագրեալն և պահապանը զուր տեղ կը փնտռէին խաղցկին հետքս։

— Անտարակոյս անձրևն ցրուած պիտի ըլլայ անոր աճիւնը, ըսաւ Պարթենոս ցած ձայնով։ Երանանք պաշտա դառնալ և կայսեր ըսել՝ թէ անձրևն և հովն նազովրեցւոյն մոխիրը ցրուած էին։

— Գեռ խոզարկները, պատասխանեց պրեստորներէն մին՝ որ կ'ուզէր հաւատարմաբար կայսեր հրամանը կատարել։

Պարթենոս անհամբերութենէն և զօկամակութենէն ուսերը թօթիլեց և ճամբան առաջ տարաւ, պահապանին խզճմութիւնը անիծելով։

Յանկարծակի շան մը և յետոյ ուրիշ շատ շուներու հաջելը լսուեցաւ, և Պարթենոս ջահ մը բռնած՝ մրմնջելով դէպ ի ձայն եկած կողմը գնաց։

— Տարակոյս չունիմ թէ այն նազովրեցին ճամբարիտ ըսաւ, և անշուշտ շաները իրեն ոսկորները կը լսփեն։

Խաղցկին աստ անպ ցրուած մեխիբքեր տեսնելով՝ համագոհեցաւ թէ չէր սխալած, միշտեռ անթիի շուները քրիստոնեայ քահանային ոսկորները կ'ուռէին։

Ուրեմն Անիկեւոսի մարգարէութիւնն կատարուած էր, զիշերն մթին էր, ջուրն հեղեգօրէն կը հոսէր, շանք իւր ոսկորները կը քափէին և իւր հողին հրեշտակաց հետ յաղթական նուազը կ'երգէր։

Խաղցկն երեկոյնեան գէմ վառուած ըլլալով, մարտիրոսն սարսափելի տանջանաց մէջ հողին աւանդած էր։ Մըրիկն բոցը մաւրած էր, և դահիճ տեսնելով թէ դատապարտելոյն միայն ոսկորները մնացած էին՝

հեռացան, հետեւալ օրը զանոնք այրելու համար, սակայն անյազ անտէր շուները հոն վազեր էին՝ զանոնք լափելու համար։

Մեծդ Արամազդ, նազովրեցին սուտ չէ ըսած, մրմնաց ազատագրեալն խարոյկին նայելով։

— Ի՞նչ պէտք է ընել, հարցուցին պա- հապանին։

— Հարկ է Պալատինհան բուրը դառ- նալ, և վազը ես կայսեր պիտի պատմեմ ինչ որ տեսնեմ, ըսաւ Պարթեմնա՝ ուրա- խացած կայսեր զգալիք սարսափին համար, զոր արդէն առաջուց կը գռշակէր։

Այն պահուն, յորում ազատագրեալն և պահապանք կը հեռանային այն տեղէն, ա- քառ թողով շուները, փլորոնիա, Պարիս և Սեքստոս խարոյկին կը մտնեային։ Օրիորդն, լսելով թէ իւր եղբարցմէ մին պիտի այրէին, կը վախէր թէ գուցէ Անիկետոս ըլլայ նա։ Մամբրտեան բանտին մէջ կալանաւորեալ քրիստոնէից թիւը գիտնալով, դատապար- տութիւնն իրեն շատ շուտ կ'երևար։ Այնու հանդերձ քրիստոնէիցմէ մէկէն խնդրեց որ երթայ ներկայ գտնուի մարտիրոսին մահուան, և նա ալ դարձաւ նահատակին փառաւոր վախճանը աւետեց։ Փլորոնիա սաստիկ ցա- ւելով, իսկոյն որոշեց երթալ և ուրբ քա- հանային նշխարները ժողովել։ Ի զուր ա- մարանցին մէջ գտնուող քրիստոնէայք և Տուզդիդու ջանացին զինքը համոզել, թէ այն սաստիկ փոթորկին միջոց վտանգաւոր էր մինչև տանջանաց տեղը երթալ. ի զուր Պարիս և քահանայ մը ուզեցին իրեն տեղ երթալ. ինքը պատասխանեց թէ Աստուած պէտք եղած ոյժը իրեն պիտի տայ, և զա- նոնք միայն իբր ընկերակից առաւ իրեն հետ։ Սեքստոս, ուզելով վտանգին մասնա- կից ըլլալ, փլորոնիայի ետեւէն գնաց, բայց օրիորդն Արիսեան դաշտին մէջ միայն ի- մացաւ նորա ներկայութիւնը։ Օրիորդն հե- ծեծանօք խարոյկին մերձեցաւ. Պարիս՝ ձեռքը քաւազան մը բռնած՝ շուները հալածեց, և բաց ի Սեքստոսէ ամենքն ալ ծնրադրեցին։ Նոյն պահուն լուսինն ամպոց միջէն երևցաւ և իւր աղօտ ճառագայթները լուսաւորեցին քրիստոնէից զէմքը։ որ մարտիրոսին տան,

ջանօք նուիրական դարձած գետնին վրայ ծնրադրեր էին։

— Անիկետոս, դու որ արդ երկնային եր- ջանկութեան մէջ ես, յիշէ զիս. աղաղակեց Փլորոնիա, բազուկները երկինք բարձրացը- նելով։

— Շուտ ընենք, ժամանակն զմեզ կը ստիպէ, ըսաւ Սեքստոս, որ կ'ուզէր այդ սրտաշարժ տեսարանին վերջ տալ։

Պարիս իւր վերարկուին ներքև ծածկած կաւէ լամբարը հանեց, և քահանային ու Սեքստոսի օգնութեամբ աստ անդ ցրուած նշխարները ժողովեց երկիւղածութեամբ, օրհ- նեալ և սուրբ հոգի մը մէջ թաղելու համար զանոնք։ Յետոյ յուզարկաւոր ամբոխն Տուզ- դիդայի ամբարանոցը դարձաւ՝ մարտիրոսին սակերբը փլափոս էղբմեմի շիրմին քով փո- րուած գերեզմանի մը մէջ թաղելու համար։

Հետեւեալ օրը Դոմեափանոս կանուխ ար- թընցաւ, և անկողնէ ելնելէն առաջ ազա- տագրեալը կանչեց։

— Հրամաններս կատարեցիր, հարցուց կայսրն։

— Այո՛, բոլորն ալ կատարեցի, պատաս- խանեց Պարթեմնոս։

— Այդ խաբեբային մոխիրը անձրևէն ցրուած էր։

— Ոչ, տէր իմ, շուները նորա ոսկր- ները լալեցին, պատասխանեց նա։

Եւ ծածուկ գահութեամբ մը բոլոր տե- ոածը պատմեց։ Կայսրն՝ սարսափած և կա- տաղութեամբ լի՝ հրամայեց որ քրիստոնէայ մարտիրոսին մահուան ներկայ եղող դատա- ւորը սպանուի, որովհետև թողուցած էր որ զահիճք խարոյկէն հեռանան։ Յետոյ ցնո- բական տագնապանօք անկողնէն վար ցատ- կելով,

— Ուրեմ իմ մահս մերձ է, աղա- ղակեց։ Թեքեւս Դոմեափա, Պարթեմնոս և միւս ծառաներս զիս պիտի սպաննեն։

Պարթեմնոս այս խօսքերը լսելով զողաց, և իւր ապականած սիրտն եղեռնական ոճիր մը մտածեց։ Նոյն պահուն, յորում կայսրն շուտ շուտ սենեկին մէջ կը շրջափայէր, եկան իրեն ծանուցին՝ թէ Նումայի պալատէն պատ- զամաւոր մը փլաւիա վետտեան կուսին կող-

մանէ նամակ մը բերեր էր: Հետաքրքրու-
թեամբ կարմիր ժպտաւենով շրջանակեալ և
բզեզի ձև ունեցող կնքով փակուած նամակը
տանըլով բացաւ, և մի քանի տող կարդալէն
վերջը ակամայ ծիծաղով մ'ըսաւ .

— Եթէ մահա մտ է, կ'ուզեմ մեռնե-
լէս առաջ կեանքը վայելել: Նախ կ'ուզեմ
շատ մը բարեկամներ և թշնամիներ Պղու-
տոնի ղրկել, որ ղոժիք գնացած ժամանակս՝
ինծի ընդ առաջ ելնեն:

Յետոյ տարածուեցաւ անկողնոյ մը վրայ,
և ծառաներն զինքը բազանիք տարին. լուս-
ցարան մանելէն առաջ խստիւ արգիլեց Պար-
թենոսի, որ գիշերուան գէպքը Դամեոյայի
չի պատմէ, վախելով թէ գուցէ նազովբեց-
ւոյն մարգարէութեան սաղոյժ ըլլալուն վրայ
ուրախանայ:

ԳԼՈՒԽ ԺԵ

ԿՐԱԿ ՎԵՍՏԱՅԻ

ԴՈՄԵՏԻԱՆՈՍ սաստիկ բարկացեր էր
և ամէն տեղ փնտռել կու տար զՄեքստոս
Սարինոս, որոյ դատապարտութեան վճիռն
խիստ ցաւ ազդած էր Էդուինելիայի: Սեքստոս
միայն ողջ մնացեր էր իւր ազգականներէն,
և անոր սպառնացած վտանգին մտածութիւնն
կը ստիպէր գնա դառն արտոնւոյ թափելու:

Մնիկեստոսի մահուան երկրորդ օրը, կոյսն
սովորականէ աւելի փառու էր, և սիրտն տխուր
նախազգացութեամբ մը կը ճնշուէր: Հան-
դարտելու համար անտառը իջաւ, և տմե-
նէն աւելի խիտ և թանձր ծառազնաց ներ-
քե գնաց: Նստած բարձրածայր կաղնոյ մը
ստորորտը, որ հովանոցի մը նման իւր ճիւ-
ղերը կը տարածէր, նախանձոտ աչօք սկսաւ
գիտել փոքրիկ թռչնոյ մը շնորհայի ոստոս,
տոսմները, որ ազատօրէն ընդարձակութեան
մէջ կը թռչտէր: Ինքն ալ շատ երջանիկ
պիտի համարէր ինքզինքը՝ եթէ թեւեր ու-
նենար հեռանալու համար աշխարհէս, յո-
րում ոչ մէկ սիրելի բան սրտին հետ չէր
կապուած. կը փափաքէր օդոյն մէջ թռչիլ:

մոռացեալ աշխարհէ և շատ զոհ՝ եթէ այլ
ևս երկիր չ'իջներ: Նորա մեղամաղձիկ նա-
յուածքն երկար ժամանակ թռչնոյն քմահա-
ճոյ ընթացքը կը պիտէր, յետոյ սկսաւ նա-
յիլ զէպ ի Նումայի պալատը, և ծառոց մի-
ջէն տեսաւ փարիոյայի ճերմակ զգեստը, որ
արագութեամբ առ ինքն կու գար:

— Վերջապէս դարձեալ զքեզ կը գրա-
նեմ, ըսաւ խոտին վրայ նստելով. թէ՛ ննջա-
րանին, թէ՛ գաւթին և թէ՛ տաճարին մէջ
զքեզ փնտռեցի՝ բայց չի գտայ: Շատ բա-
նեւ ունիմ՝ քեզ ընկիւք, սակայն նախ ամե-
նէն աւելի կարեւորը պիտի ըսեմ: Ինչպէս
որ գիտես, այս գիշեր իմ կարգս էր սրբա-
զան հրոյն պահպանութիւն ընել. սակայն
մեծ վետտեան կոյսն գիտնալով թէ քու
ինձ շատ սիրելի է, իմ տեղս զքեզ որո-
շեց. բայց եթէ քեզի անհաճոյ է, յանձն չեմ
առնուր այդ բանը:

Իսկ օրիորդն աղերսագին իւր փերելի ըն-
կերոջ երեսը կը նայէր, անոր հասկցնելու
համար՝ թէ չէր կրնար անոր առաջարկու-
թիւնը ընդունիլ: Էդուինելիա ծիծաղեցաւ,
և ձեռքը փարիոյայի ճերմակ զգեստին վրայ
գնելով,

— Մի՛ վախեր, ըսաւ մայրական գորտ-
վով մը, այս փոփոխութիւնն ինձ բնաւ ան-
հաճոյ չէ: Քուսնն այնքան ոգտակար է քու
հասակիդ, որ անգթութիւն պիտի ըլլար զքեզ
անկէ զրկելը: Բայց ըսէ ինձ՝ թէ ինչու հա-
մար սառնարին մէջ հսկելէ կը վախես:

— Կը վախեմ թէ մի՛ գուցէ զիս յան-
դիմանելու համար զիցուհոյն սպառնալից
ձայնը լսեմ տաճարին խորէն, ըսաւ փա-
րիոյա մեղմ և ղողղողուն ձայնով մը:

— Բայց ինչու այդպիսի գաղափարներ
ունիս. միթէ՞ զու մեր մէջ ամենաշատն և
ամենէն աւելի անմեղը չեմ. հետեւաբար տա-
մենէս աւելի արժանաւորն ես վետտայի ա-
հաւոր սեղանին մօտենալուն:

— Իրեն ի պատիւ սպանուած ողջակի-
պաց վրայ գթալու համար զիցունին ինձ
զայրացած ե... Եթէ գիտնայիր թէ ճրչափ
կը ցաւիմ, երբ կը տեսնեմ որ ցուլը սպի-
տակ գառնուկը իրեն սեղանը կը տանին...
Այդ խեղճ անասնոց օրհասական հայրածնքն

միշտ ինծի կը դառնան. և երբ զոհադրժողն զանոնք սպանենելու համար տապաքը կը բարձրացընէ՝ անոնց արիւնը չի տեսնելու համար աչքերս կը փակեմ:

Փարիսլայի նրբին զիմագծերն զգացած սարսափը կ'արտայայտէին. որոշ կերպով կը տեսնուէր թէ այն արինանոս զոհերն նորա երեակայութիւնը խանգարած և իւր հոգւոյն վրայ ախուր ազդեցութիւն մ'ըրած էին:

— Քու կարեկցութիւնդ բնական բան է, բնաւ կուտնելիս զինքը մխիթարելու համար. եթէ շատ անգամ տեսնես թէ սեղանին ստորոտը արիւն կը հոսէ, այլ ևս պիտի չի նեղուիս, սրբոյնտե մարգկային սիրտն ամէն բանի կը վարժի... Բայց եւրոնք են միւս լուրերը՝ զոր կ'ազդէր ինձ հաղորդել: Խօսէ՛, պատրաստ եմ զանոնք լսելու:

— Դոմեախանոս այսօր անհանգիստ ըլլալով և սենեկէն զուրս չի կարենալով ելնել, մեծ մետաեան կուսին հրամայեց որ Ոսկեզօծ տունը առնող ճանապարհը բաց ձգէ: Ելուտնելիս՝ Դոմեախանոսի այս չարախորհուրդ հրամանին նպատակը հասկնալով՝ սարսափ մը զգաց, բայց բան չի յայտնեց. իսկ Փարիսլայ շարունակեց.

— Ուրիշ լուր մ'ալ ամբողջ Հոռովը վեր վար ըրաւ: Ելրէկ Արիսեան զաշտին մէջ նազովոնցի մը այրեր են, բայց անձրեն բոցը մարեր է, և զետնէն հրացայա աչօք բուններ ելնելով նորա ասկըները լափեր են:

Ելոյսն շատ ականջ չի կախեց այս պատմութեան, որ իրին ստոյգ եղելութիւնը կերպարանափոխ կ'ընէր, ասկայն իւր մանկութեան մտերիմը՝ զՓրորոնիան յիշեց յանկարծ: Ենտոյ երեակացութեան առջև պատկերացաւ իւրն մայրն, որ զիցուէրս պաշտօնը ուրացեր և քրիստոնեայ եղեր էր, նոյնպէս և Դոմիտրիլլա՝ որոյ զժրագոյնութեանց վրայ երկար լացած էր: Այն ժամանակ քրիստոնէից վրայ գութը շարժելով, ականայ ազաղակեց.

— Ո՛հ, սրբան զոհեր մատուցուէր են իբր որդակէզ աստուածներուն: Եւ ասկայն նազովոնցիք անմեղ են. մէջ սուրը և ոչ կրակն պիտի չի կարողանան զանոնք իրենց

հաւատքէն խախտել, որովհետեւ դիցազնական արութեամբ մեռնողներուն արիւնը կը վառէ կ'արծաթէ՝ ողջ մնացողներուն սիրտը, և արհամարհել կու տայ անոնց՝ կեանքը:

Այս խօսքերս ըսելէն յետոյ՝ կոյսն զլուր ծոց և լուս կեցաւ: Փարիսլայ նորա մեղձտուութիւնը տեսնելով՝ ջանաց օթափեցնել զինքը, սակայն անկարելի եղաւ: Անշարժ և լուս կենալէն ձանձրացած՝ ուրախութեամբ ծափարարելով ոտք ելաւ և ըսաւ.

— Ե՛րազեմ ես իմ ձեռքովս հիւսել այն կաղնոյ տերեւներէ պտակը, որ այս երեկոյ քու զլուսիդ պիտի պսակէ, սիրելի Ելուտնելիս:

Եւ ծառի մը քով վազելով, հնացած կոնդին մէկ ծակին մէջ դրաւ ոտքը և քանի մը ձիւղեր կտրելու չափ բարձրացաւ: Պսակը շինելէն յետոյ, տարաւ պայն և իւր սիրելի ընկերոջը ծնկաց վրայ դրաւ. բայց խնդին առաւ գետին նետեց և ոտքերով կոկոտեց զայն:

— Ինչո՞ւ այգպէս ոտնակօխ կ'ընես, հարցուց տիւր վեստեանն:

— Ձե՛ս տեսներ որ կարին մը պահուըտած է տերեւներուն ներքեւ, և չե՛ս գիտեր թէ այդ կենդանին չարաբաշակ է: Բայց մի՛ վախեր, արիւշ մ'ալ պիտի հիւսեմ, և ամեն շարիք քեզմէ հեռացնելու համար խնդ կուտնոյ և աղաւնիծի տերեւներ պիտի դնեմ մէջը:

Օրիորդին ունեցած նախապաշարուն Ելուտնելիայի ծիծաղը շարժեց:

— Ե՛րազեմ մեծ կոյսը տեսնել՝ հետա նկուր, ըսաւ՝ արցիլելու համար որ ծառին վրայ չեղէ:

Փարիսլայ աճապարանօք կաղնոյ քանի մը ձիւղեր կտրեց և Ելուտնելիայի ետեւէն գնաց: Երբ անտառակէն զուրս կ'ելնէին, Փլախայի հանդիպեցան որ զիրենք կեցուց:

— Այս զիշեր դու պիտի ընես, Ելուտնելիս, սրբազան կրակին պահպանութիւնը:

— Գիտեմ արդէն:

— Աստուածք քեզ օգնական ըլլան, վրայ բերաւ նա կեղծաւորութեամբ՝ որ զայրացուց զԵլուտնելիս:

— Ո՛վ որ կը փափաքի՝ անոր ըրէ քու

մաղթանքներդ, ըստ Կուռնելիա խիստ ձայնով մը :

→ Գիտեմ որ պէտք չունիս, որովհետեւ քու երկտասարդութեանդ և գեղեցկութեանդ համար զօրաւոր պաշտպաններ ունիս, ըստ փլաւիա հեգնութեամբ :

Կուռնելիա սաստիկ գայրացած ըլլալով՝ խայթի խօսքեր կ'ուզէր ըսել, բայց հազիւ ինքզինքը զսպեց, և արհամարհանօք դուրսը շարժելով՝ առանց բան մ'ըսելու ճամբան շաբունակեց :

→ Փլաւիա որչափ որ տգեղ է՝ նոյնչափ ալ չար է, գոչեց փարիլա բարկութեամբ : Կուռնելիա չի պատասխանեց. հետեւն յետ կուսին ետէ՛ գնաց, և օրիորդէն բաժնուելով մինչև երեկոյ տուննէն քնաց :

Երբ արեգակն փերշին ճառագայթներն ամպոց կարծր փոյն մը տալով հորիզոնին ետև կորսուեցան, Կուռնելիա ուսոց վրայ ճերմակ բրդեայ վերարկու մ'առաւ, զիկոյն վրայ դրա կաղնոյ տերեւներէ շինուած պլասակը, և մեծ կուսին և իւր երկու ընկերակցաց հետ զէպ ի տաճարը գնաց : Գիշերը վրայ հասնելով՝ իւր Թիւրքիստին աւելի ևս սաստկացեր էր. և երբոր տաճարին սեմէն ներս մտաւ, կարծեց թէ ցրտառարարութեամբ մը իրեն սիրտը կը սեղմէր : Հագրի կրցաւ ուշադրութիւն ընել այն կուսին, որ իրեն յանձնեց տղանիճի ծրար մը և կրակը խառնելու կամ արծարծելու համար երկաթեայ գաւազան մը :

Մեծ կոյսն յանձնարարեց որ չի քնանայ, յիշեցնելով այն պատիժները որ կը տրուէին՝ եթէ կրակն մարէր. յետոյ դուրս ելաւ նա՝ առանձին թողլով դիմքը, անդանին քով դրուած քարէ բազմոյցին վրայ նստած : Իսկոյն դիշերային մթութիւնը տաքութեամբ տաճարին մէջ, որ աղօտ կերպով լուսաւորուած էր կրակին լուսով, որ սիւներուն պէսպէս և երևակայեալ ձևեր կու տար : Կուռնելիա երկայն ժամեր իւր երազոց մէջ խորասուզեալ մնաց՝ աչքերը աւորոյ կերպով առջև սեւեռած : Ի վերջոյ արտեանունքն ծանրացան, և չուզելով քուսնէն յաղթուիլ, սկսաւ սեղանին չորս կողմը պտտուիլ : Քանի մը քայլ ընելէն յետոյ՝

նստաւ և դարձեալ քունն վրայ հասաւ : Նա չէր քնանար, բայց տեսակ մը անորոշ թրմութեան մէջ ընկղմած՝ կը կարծէր տեսնել զորոշխացեալ ամպի մը մէջ իրեն մայրը, որ երկնից ճամբան ցոյց կու տար իրեն : Այս թմրութիւնը շատ չի տևեց, ուժգին կերպով վեր ելաւ, իւր շերմ ճակատը մարմարեայ սիւներէն մէկուն կ'ընկնուցուց, կրակը արծարծելու համար գաւազանը տաւա և գնաց սեղանին քով նստաւ : յիշելով՝ ոչ առանց սարսափելու՝ Ոսկեգոծ տանը գաղտնի ճամբան : Իսկոյն սարսուռ մը զգաց, բեր էր թեթեւ շառաւ մը՝ մարմարեայ յատակի վրայ կոխող կոշիկ ձայն մը : Սարսափէն չի կրցաւ նայիլ և աչքերը գոցեց :

Ձեր խաբուած. երկայն շրջագնեստի մը մէջ փաթաթուած մարդ մը դանդաղ քայլելով առաջ կու գար. նորա ետևէն կու գար արիշ մարդ մ'ալ, որ սիւներուն ետև չորս ձեռաց վրայ կը քայլէր : Մոյն պահուն ան ծածուկ Կուռնելիայի մօտեցաւ : Այն ժամանակ լոյսն անդրադարձաւ արևադարձ պատմուշտանի և դափնեայ պսակին վրայ, զոր Դոմեստիանոս՝ Յուլիոս Էլեսարու նման՝ իւր ճաղատութիւնը գոցելու համար կը գնէր : Վեստեան կոյսն աչքերը բացաւ և փախէն խեղզով աղաղակ մ'արձակեց. և յետոյ ոտք ելնելով,

→ Ի՞նչպէս տաճարը կու գաս, ըստ հրամայական ձայնով մը՝ ալ ձեռքը սեղաւնին վրայ դրած. յանուն աստուածունչոյն քեզ կը հրամայեմ, խօսէ՛ :

→ Քու հարցմանդ եղանակը տարօրինակ է, դու զիս չես ճանաչեր : Երբ կարծես որ կայսրն տաճարը այցելելու համար քրմուհեաց հանութիւնը պիտի տունու, ըսաւ Դոմեստիանոս զոռորութեամբ :

→ Ի՞նչ և եթէ չես ուզեր որ Արաւմազդայ բարկութեան շանթերն զքեզ մոխիր դարձնեն, այս սրբազան սեղր քու խօսքերովդ մի՛ պղծեր, գոչեց կոյսն գայրացած :

Դոմեստիանոս այս խօսքերը հեղեղական ծիծաղով մը լսեց : Նոյն պահուն ծածկուած մարդն կայսեր վրայ յարձակեցաւ, Կուռնելիայէն հեռացուց զինքը, և ուժով մը զլիսուն զարկաւ բռնցիկ թեթեւ կերպով մը

Թմրած գետին ինկաւ նա, և վախէն չի կարենալով տեղէն շարժիլ, մեռեալ ձևացուց և աչքերը գոցեց:

Վետտեան կոյսն աստուածային օգնութիւն մը կ'առնէ, և սաստիկ յոգնած և յուզուած այն դէպքէն՝ սեղանին ստորոտը վար ինկաւ:

Անծանօթն իրեն մօտեցաւ, խնամք բազկացը մէջ առաւ, և տաճարէն դուրս ելնելով՝ Նումայի պալատը տանող գաւթին մէջ մտաւ: Վախելով թէ իւր ներկայութեամբ սրբազան տեղայն մէջ կուսին չարեաց պատճառ չըլլայ, ատգնապալից և շուարած՝ նեղ անցքին մէջ տեղ կեցաւ, յետոյ գետին դրաւ զնա, և զլուսն սրահներէն մէկուն կոթնցընելով, դէպ ի անտառը երթալով սկսաւ մըմնլալ:

— Մեծդ Աստուած, հսկէ այդ դժբաղդին վրայ:

Ընթերցողն անպատճառ գուշակած պիտի ըլլայ թէ այդ անծանօթը Պարիսն էր. և յիշաւ ինքն էր:

Կուռնելիայի վրայ անցած գործուն մղեալ՝ Տուզդիոյայի ամարանոցը թողլով՝ առնարին պատերը մազցեր և անխոհմտաբար մտեր էր սրբազան պարսպին մէջ, յորում տեսաւ զԴոմեստիանոս և նորա ետեւէն գնաց:

Սուերամարան մեծ դժուարութեամբ և տագնապով պատերէն անցաւ և դուրս ելաւ, նախատեսելով նոյն գիշերուան աղետալի հն. տեսնելները: Դէպ ի ամարանոց ուղղուեցաւ՝ իւր անտառը Սեքստոսի պատմելու և Դոմեստիանոսի կատաղութենէն կուռնելիան ազատելու միջոց մը հարցնելու համար:

Մինչդեռ Պարիս կը հեռանար, կայսրն ասկաւ տակաւ զլուսն վեր բարձրացուց, վախով չորս կողմը նայեցաւ և ամենայն ուշադրութեամբ ականջ դրաւ, բոլորովին ոտքի վրայ ելնելու արութիւն չունենալով, կամաց կամաց սիրտ առաւ և չորս ձեռքը դրան մօտեցաւ, զոր բաց գտնելով՝ ապահով կերպով տաճարը մտաւ: Դէմքն ահարկու երեւոյթ մ'ունէր, իսկ կատաղութիւնն այնքան փոփոխած էր կերպարանքը՝ որ վրան ամենեւին մարդկային բան մը չէր տեսնուեր: Չի գիտնալով թէ մի էր արգեօք զինքը ծածոզն, բարկութենէն կը գողար և ականջ

ները կրճտելով կ'երգնուր Կուռնելիայէն վրէժը լուծել: Սատանայական ծիծաղ մը երևցաւ իւր շրթանց վրայ. յետոյ կրակին մօտենալով երկաթէ գաւազանը առաւ և բռնորովին մարեց կրակը:

Այս գործողութիւնը, որ ամէն հիթանոսի համար սրբապղծութիւն մ'էր, հազիւ թէ կատարեր էր՝ աւելորդապաշտական սարսափ մը տիրեց վրան: Կը կարծէր խուլ մոնչիւն մը լսել, նման ալեաց մոնչիւն՝ որոնք ժայռի զարնուելով կը փշրին: Սիրտն ուժգին կը բաբախէր, և պաղ քրտինք մը ճաւատը թրջեր էր: Գաւթիք մտաւ, մէկ ակնթիւ թարթի մէջ զայն կարեց՝ իբր թէ մէկը ետեւէն կը վազէր, և պաշտին դրան առջեւ գալով՝ հոն ինկաւ և երկար ժամանակ ուժաթափ մնաց: Հուսկ ապա վրէժնադրութեան փոփառով վառուած՝ դրան զարկաւ:

Գերի մը բացաւ դուռը և յարգանք մէկդի քաշուեցաւ, գիտնալով որ կայսրն դէպ ի ծածուկ անցքը կ'երթար:

— Թո՛ղ կուսանք շուտով ի մի գումարուին և հետո տաճարը գան՝ զիցուռնայ բարկութիւնը իջեցնելու համար, ազադակեց Դոմեստիանոս իշխանական ձայնով մը, գաւթին մէջ տեղը կենալով:

Քանի մը վայրկեան յետոյ ժողովեցան վեստեան կուսանք վազելով, քողերնին խառն ինկուռն ձգած, զէմքերնին այլայլած քուռնէն և յուզումէն:

— Քրմահիք, ես եկած էի աստուածունչնայն պաշտօն մասուցանելու համար, և ահա որ սրբապղծութեան մը հանդիսատես եւ զայ. հետո եկէ՛ք և սարսափեցէ՛ք եղած ուճիրին վրայ:

Եւ գաւթին ելնելով դէպ ի տաճարը գնաց և Կուռնելիայի ձերմակ զգեստը մարմարիտ նին հետ կը շփոթուէր. վեստեանք առանց զայն տեսնելու անցան. բայց փաթիլա, որ կէս գիշերին կանչուելու պատճառը չէր հաւանցած և կէս քնոյ մէջ կը հետեւէր, ոտքը կուռնելիայի պզտասներուն մէջ փաթթուելով և զինքը այնպէս գետնատարած տեսնելով և քովը ծնրադրեց՝ առանց Դոմեստիանոսի խօսքերուն ուշ դնելու:

Այդ պահուն վեստեանք տաճարը մտած

էին, և կրակը մարած տեսնելով՝ արասփի աղաղակ մ'արձակեցին և ի նշան սգոյ երեսնին թողով ծածկեցին:

— Տառարը մտած ժամանակս, ըսաւ Դոմետիանոս, տեսայ որ կրակին պահապանը անծանօթի մը հետ կը խօսէր. իմ ներկայութիւնս զինքը վախցուց և ղէպ ի անտառը փախաւ իւր մեղսակցին հետ, որ անտարաւ կոյս պատէն մագլցելով փախեր է: Նոյն միջոցին աստուածունին զայրաւնալով կրակը մարեց:

Քրմուհիք ուրիշ աղաղակ մ'ալ արձակեցին, և չէին համարձակեր սեղանին մօտենալ:

— Քու վրէժդ պիտի լուծենք, ո՛վ աստուածունի, աղաղակեց այն ժամանակ մեծ կոյսն: Մինչև որ փերոս սրբազան կրակը դարձեալ չի վառէ, մահկանացուի մը ոտքն քու տաճարիդ մէջ պիտի չի կոխէ:

Յետոյ իւր ընկերաց օգնութեամբ եռու տանոյ վրայ դրուած անօթը վերցուց և Դոմետիանոսի հետ ղէպ ի գաւիթը գնաց:

— Պէտք է յանցաւորը փնտռել, ըսաւ Դոմետիանոս:

— Ահաւասիկ հոս է, աղաղակեցին վեստեանք, օրիորդը ցոյց տալով, որ փաբիոլայի ուսին կոթընած՝ դանդաղ քայլերով առաջ կու գար:

— Հեռացիր այդ ամպարշտէն, միայն անոր շունչն կրնայ զքեզ պղծել, ըսաւ մեծ վեստեան կոյսն, փաբիոլայի ձեռքէն բռնելով և կուռնելիայէն հեռացնելով:

— Ամպարիշտ, աղաղակեցին վեստեանք միաբերան:

Այս նախատինքս անմեղ կուսին սիրտը յիշատարեց: Մինչև այն վայրկեանը՝ պոսիւր կուրծքին վրայ ծածկ էր, և իւր երեսին այլալուծիւնն պիտի կարծուէր խղճի խայթին արդիւնք. սակայն այդ նախատինքն աստիկ զայրացուց զինքը, որ բոցաւառ դիմօք և ձեռքը երկնցուցած աղաղակեց.

— Ո՛վ որ զիս ամպարիշտ կը կոչէ, կը ստէ... Փլաւիտ Սաբինոսի աղէկին իւր նախահարց անունը չէ արասաւորած...

— Լո՛ւ, սրբապիոծ կին, քո խօսքերդ հայոյսնք են, ըսաւ Դոմետիանոս:

Կուռնելիա կայսեր վրայ սաստիկ արհամար-

հանաց նայուածք մը ձգեց, յետոյ ժպտելով դաւանազին կերպով.

— Դո՛ւ զիս սրբապիոծ կը կոչես, ըսաւ բարձր և վսեմ ձայնով մը, արդէն զիս էի թէ այսպէս պիտի ըլլար, և քեզմէ ուրիշ բան չէի սպասեր:

— Որուն հետ զքեզ տեսայ՝ յայտնէ՛ աւոր անունը, վրայ բերաւ կայսրն՝ խօսքը ընդհատելով:

— Նա որ զիս աղատելու և իմ ամեղութեանս վրէժխնդիր ըլլալու եկաւ՝ մարդ չէր, այլ երկնային առաքեալ ժը. դու ալ ինձ պէտ անոր ոսկեղոյն մագերը և վայելուչ հասակը տեսար...

— Եր դառանցէ, վրայ բերին կուսանք:

— Ո՛չ, չեմ՝ դառանցեր, աղաղակեց կուռնելիա:

— Յետոյ իւր ընկերաց դառնալով, ըսաւ.

— Իմ մօտ տուներին վրայ կ'երգնում թէ բուրդովին անմեղ եմ, ալ այսուհետեւ շրթունքս զիս արպարացնելու համար պիտի չի բացուին, որովհետեւ զիս իբր աստիճան պիտի մօրաշտառեն:

— Էս քեզ կը հաւատամ, կուռնելիա, աղաղակեց փաբիոլա հեծեծանօք:

Եւ նա խկոյն իւր սիրելոյն բազկացը մէջ պիտի նետուէր, երբ մեծ կոյսն զինքը բռնեց, շտելով.

— Լո՛ւ, և քու անմիտ կարեկցութեամբդ մի՛ զայրացներ աստուածունին:

— Ծնորհակալ եմ, փաբիոլա, շնորհակալ եմ՝ մաքուր և անմեղ հոգի, ըսաւ կուռնելիա, փաբիոլայի սիրոյն վրայ յուզեալ, որ առանց ուշ դնելու յանդիմանուածանք իւր զգացումը կը յայտնէր պարզ կերպով:

— Թող յանցաւորն իւր նմարանին մէջ փակուի, ոչ ոք երթայ իրեն քով, ես իբր քրմապետ ձեզ կը հրամայեմ, վրայ բերաւ Դոմետիանոս:

— Իւր ներկայութիւնը կը պղծէ զպալատը, ո՛վ կայսր, ըսաւ փլաւիտ:

Կայսրն, մեծ կուսին ծառայական զինուորութեան վրայ ուրախացած, որ կը թողուր հեռացնել զկուռնելիա իւր ընկերներէն, հրամայեց՝ մինչև Ծխարձակարանի (hippodromo)

me) բանտը տանելու վայրկեանը՝ դաւթին մէջ պահել զինքը: Յետոյ այս անտարանէն ձանձրացած հեռացաւ: Կուսանք անոր հետեւեցան՝ փաթիլան հետերինն առած, որ կ'ուզէր բռնի կերպով Կուսանելիայի քով մնալ:

— Մի լար, սիրելիս, վերստին կը տեսնուինք, ըսաւ Կուսանելիա, մխիթարելու համար զփաթիլա, որ անոնց թախանձէն և սպառնալիքէն բռնադատուած՝ առանց ընդ-դիմութեան գնաց հետերինն:

Կուսանելիա, որ աղախիններու հսկողութեան ներքեւ մնաց, սեան մը քով նստաւ և սկսաւ սաստիկ կերպով արտասուել: Չէր ցաւեր նա իւր կենաց համար, որ այն ինչ բացուած՝ պիտի թառամէր ծաղկի մը պէս. այլ կ'ող-բաթ իւր հարց անուան վրայ՝ որ կայտու-թեան տարեգրաց մէջ վատահամբաւութեան և անարգանաց կնիքը պիտի կրէր: Որով-հետեւ ինքն լաւ հասկցած էր որ զինքը արդարացեալու ոչ ոք պիտի համարձակէր, և բաց ի փաթիլայի սրտէն՝ ուրիշ ոչ մէկ սիրտ իւր անմեղութեան պիտի հաւատար...

— Ինչո՞ւ համար բռնաւորի մը չարու-թեամբ անարգուած անուանս վրայ ցաւիմ, ըսաւ յանկարծակի դառնացած սրտով և ա-չաց ջերմաշերմ արտասուքը սրբելով: Երբ որ իմ անիւնս հովուն տան և իմ հոգիս ալ Ելիսեան դաշտը սլանայ, թերեւ այն ժամա-նակ միայն անմեղութիւնս յայտնուի... Դու մետախնոս զիս կը զրպարտէ, քաղաքացիք զիս կ'արհամարհեն, բայց չկայ զօրութիւն մը որ խէ իմ սրտէս առաքինութեան գոհու-թիւնը:

Միջնորդեալ այսպէս ինքն իրեն կը խօսէր, տանարին մէջ զինքը ազատողը յիշեց, և կը յուսար թէ այդ աստուածառաք անձն կ'իջնէր դարձեալ երկնքէն՝ զինքը ազա-տելու համար, և այսու քաջալերեցաւ: Ա-ռաւտեան՝ լալով ողջունեց այն պալատը, ուր տղայ եկած և մեծցած էր, և զոհ էր՝ որ վետսայի կուսանաց մէջ մտեր էր. յետոյ եկան զինքը ձիարձակարանի բանտը տարին:

Շարայարեի:



ՓՈԹՈՐԻԿՆԵՐՆ ԵՒ ՆՈՑԱ ԸՐԱՇ ՎՆԱՍՔՆ ԳԱՂՂՆՈՑ ՄԵՋ



Յետ քսան եւ աւելի տարիներու խուզարո-կութեանց, հաստատուած է՝ թէ Գաղղիոյ մէջ ամէն տարի միջին հաշուով 12,000 փո-թորիկ պատահեր են, հետեւեալ համեմա-տութեամբ.

Յունուար՝ 105, փետրուար՝ 63, մարտ՝ 220, ապրիլ՝ 325, մայիս՝ 1,380, յունիս՝ 3,040, յուլիս՝ 3,730, օգոստոս՝ 2,250, սեպ-տեմբեր՝ 620, հոկտեմբեր՝ 150, նոյեմբեր՝ 67, դեկտեմբեր 60:

Նոցա ըրած փնտն, միշտ ահագին, 1872 է սկսեալ մինչեւ 1894՝ շատ փոփոխութիւն կրեւ է տարուէ տարի. 1873ին՝ 50 միլիոն էր. 1874ին, 134. 1875ին, 69. 1876ին,

40. 1877ին, 57. 1878ին, 77. 1879ին, 58. 1880ին, 124. 1881ին, 82. 1882ին, 69. 1883ին, 56. 1884ին, 73. 1885ին, 112. 1886ին, 119. 1887ին, 100. 1888ին, 79. 1889ին, 87. 1890ին, 81. 1891ին, 93. 1892ին, 117. 1893ին, 86. 1894ին, 67:

Արդ, միջին հաշուով. ամէն տարի գաղ-ղիական ազգն 80 միլիոնէն աւելի կորուստ մը կ'ունենայ. որով 25 տարուան մէջ եղած փաստաց գումարը կը հասնի երկու միլիա-րի, զոր եթէ երկրին տարածութեան վրայ հաշուենք, իւրաքանչիւր եկտար հողոյ վրայ կ'ունենանք 35, 50 փոփոխաց կորուստ մը: